Եւ յետ դարձան կոտորեցան.
Ըստ արժանեացն ի ձեռս անկան
Տաճըթուխին և մատնեցան:
Տաճք ի սըրոյ նոցա մեռան
Ի՛ այլքըն փախեան և գերեցան,
Կողոպտեցան և գերեցան,
Ձիոց կոխան սատակեցան,
Խաղք խայտառակ թալանեցան,
Ի սար ու՛ ի ձոր փախըստական:
Ընդ որ փախեան՝ հալածեցան
Ի՛ ինքեանք միմեանց դահիճ դարձան,
Անթիւ ըռզակ էր վոր տարան,
Աղէկ ձիան և շատ ուղտան:
Կին և տըղայքն ի թիւ չանկան
Զոր գերեցան և կոխեցան:
Բայց ողորմած և խըղճական
Նա սիրտ ունէր Տաճըթուճն այն.
Ասախ արար խուքմ՛ և հրաման
Ոչ կորուսել զամենեսեան,
Այլ թոյլ ետուր որ ցըրուեցան,
Ի՛ աւտար երկիր վըտարեցան:

---

329. «Ըռզակ»=աւար:

335. «Ասախ» կամ խասախ թաթար. բառ.—օրէնք, իրաւունք.—«խուքմ»=պատուէր: